ՕՐՀՆՎԱԾ ՈՐԴԻՆԵՐ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Աստված մեզ կոչ է անում դաստիարակել մեր որդիներին ու դուստրերին, քանի դեռ երեխա են, ուսուցանել նրանց, երբ մեծանան, և վստահել Աստծուն նրանց համար, երբ չափահաս դառնան:

1. ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՏԻՐՈՋ ԽՐԱՏՈՎ: (12-13 ՏԱՐԵԿԱՆ)
2. ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՏԻՐՈՋ ՈՒՍՈՒՄՈՎ: (13-19 ՏԱՐԵԿԱՆ)
3. ՎՍՏԱՀԻՐ ԱՍՏԾՈՒՆ ՔՈ ՈՐԴԻՆԵՐԻ և ԴՈՒՍՏՐԵՐԻ ՀԱՄԱՐ: (20+ ՏԱՐԵԿԱՆ, ՉԱՓԱՀԱՍ)

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵՓ. 6:1-4

1 Որդինե՛ր, հնազա՛նդ եղէք ձեր ծնողներին Տէրով. որ այն է արժանը: 2 Պատվիր քո հորն եւ մորը, սա առաջին պատվիրանն է՝ տրված խոստումով, 3 որպէսզի լավ լինի քեզ համար, եւ երկար կեանք ունենաս երկրի վրա: 4 Եւ, Հայրե՛ր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, այլ <u>մեծացրէ՛ք</u> «Ektrephō» նրանց Տիրոջ <u>խրատով</u> եւ <u>ուսումով</u>:

***Ektrephō, էկտռէյֆո** – Եփ. 5:29 - որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում եւ խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին:*

*2 Տիմ. 3:16 - 16 Ամեն Գիրք աստուածաշունչ են եւ օգտակար՝, վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ ուղղելու, եւ արդարութեան **խրատելու** համար.*

I. ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՏԻՐՈՋ ԽՐԱՏՈՎ:

Դաստիարակիր փոքր երեխաներին այն ճանապարհի համեմատ, որ նրանք պետք է գնան:

Կող. 3:21 - 21 Հայրե՛ր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, որ չհուսալքուեն:

Ինչպե՞ս կարող եմ դաստիարակել իմ երեխային՝ առանց նրանց հոգին կոտրելու:

- ***Խրաել առանց բացատրություն տալու:***
- ***Համեմատել նրանց մեկ ուրիշի հետ:***
- ***Քննադատել նրանց, երբ նրանք արել են իրենց լավագույնը:***
- ***Երբեք մի հարվածեք ձեռքով երեխային կամ ապտակեք նրանց դեմքին:***

Որպես ծնող՝ եղիր հստակ, համոզիչ և բարեգութ,
երբ դաստիարակելու լինես քո երեխաներին:

Քանի դեռ երեխաները փոքր են, Աստվածաշունչն Առակաց 13.24-ում ասում է. «Գավազանը խնայողն ատում է իր որդուն, բայց նրան սիրողը վաղ է խրատում»:

***Առակ. 23:13-14 -** 13 Երեխայից մի խնայիր **խրատը**, որովհետեւ եթէ նրան գավազանով (shebet) ծեծես՝ չի մեռնի: 14 Դու նորան գավազանով (sha-vet) կծեծես, բայց հոգին կազատես դժոխքից:*

Սաղ. 23:4 - 4 Թէ եւ գնամ մահի շուքի ձորումը՝ չար բանից չեմ վախենա. որովհետեւ դու ինձ հետ ես. քո գավազանն ու քո ցուպը՝ նորանք մխիթարում են ինձ:

1 Կոր. 4:21 - Ինչպէս էք կամենում, գավազանո՞վ գամ ձեզ մօտ, թէ սիրով եւ հեզութեան հոգով:

***Առակ. 22:6 - 6 Կրթիր երեխային** իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանա նորանից:*

- *12-13 տարեկան երեխաների համար մենք դաստիարակությունից անցնում ենք ուսուցման:*

II. ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՏԻՐՈՋ ՈՒՍՈՒՄՈՎ:

*4 Եւ, Հայրե՛ր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, այլ մեծացրէ՛ք «Ektrephō» նրանց **Տիրոջ** խրատով եւ ուսումով:*

- *Ուսուցանիր անչափահաս որդիներին ու դուստրերին, որպեսզի նրանք պատրաստվեն չափահասության համար:*
- *Այս պահին մենք խոսում ենք 13-19 տարեկանների մասին, երբ երեխաները մանկական տարիքից անցնում են չափահասություն:*

2 Օր. 4:9 - 9 Միայն զգույշ եղիր եւ քո հոգիին շատ զգուշութիւն արա, որ մի գուցէ մոռանաս այն բաները որ քո աչքերը տեսան, եւ մի գուցէ նորանք սրտիցդ դուրս գան քո կեանքի բոլոր օրերում, այլ քո որդիներին եւ որդկանցդ որդիներին սովորեցնես:

2 Օր. 6:6-7 - 6 Եւ այս խօսքերը, որ ես այսօր քեզ պատուիրեցի, քո սրտի մէջ լինեն: 7 Եւ կրկնիր նորանք քո որդիներին եւ դրանց մասին կը խօսես, երբ տանը նստած ես, ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս:

- *Երբ Հիսուսը 12 տարեկանում գտնվում էր տաճարում, նա լսում էր ուսուցիչներին և հարցեր էր տալիս: Այս տարիքում ծնողները պետք է երեխաներին տանեն ուսուցման ընթացքով, որպեսզի նրանք սովորեն ինքնուրույն մտածել:*

*Ղուկ. 2:42,46-47 - 42 Եւ երբոր նա տասնեւերկու տարեկան եղաւ, նորանք տօնի **սովորութեան** պէս Երուսաղէմ գնացին...*

*46 Եւ երեք օրից յետոյ եղաւ, որ նորան տաճարի մէջ գտան, վարդապետների մէջ նստած՝ նորանց **ականջ** էր դնում, եւ նորանցից հարցնում էր: 47 Եւ ամենքն, որ նորանից լսում էին, զարմանում էին նորա իմաստութեան եւ պատասխանների վրա:*

III. ՎՍՏԱՀԻՐ ԱՍՏԾՈՒՆ ՔՈ ՈՐԴԻՆԵՐԻ և ԴՈՒՍՏՐԵՐԻ ՀԱՄԱՐ:

Վստահել չափահաս որդիներին ու դուստրերին:

Երբ երեխաները մեծանում են և դառնում չափահաս, ծնողները պետք է վստահեն նրանց, ինչպես նաև վստահեն Աստծուն, որպեսզի Նա առաջնորդի նրանց: Նրանք այլևս փոքրիկ երեխաներ չեն, այլ չափահաս որդիներ և դուստրեր: Քրիստոսում նրանք համարվում են եղբայրներ և քույրեր: Ծնողական դերը փոխարինվում է խնամակալության դերի:

Դատ. 14:1-3 - 1 Եւ Սամփսոնն իջաւ Թամնաթա եւ Թամնաթայում Փղշտացիների աղջիկներից մի կին տեսաւ, 2 Եւ վեր գնաց ու իր հօրը եւ մօրը պատմեց եւ ասեց. Թամնաթայում Փղշտացիների աղջիկներից մի կին տեսա. **եւ հիմա ինձ համար կին առէք նորան:** *3 Եւ նորա հայրն ու մայրը նորան ասեցին. Մի՞թէ քո եղբայրների աղջիկներում եւ իմ բոլոր ժողովրդի մէջ կին չկա, որ դու գնաս անթլփատ Փղշտացիներից կին առնես. բայց Սամփսոնն իր հօրն ասեց.* **Նորան առ ինձ համար, որովհետեւ իմ աչքերին հաճելի է:**

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ: Դատ. 14:4 - 4 Եւ նորա հայրն ու մայրը չգիտէին, **որ այս բանը Տէրից է,** *որովհետեւ նա Փղշտացիներից մէկ առիթ էր որոնում. եւ այն ժամածնակ Փղշտացիներն իշխում էին Իսրայէլի վրա:* ***but used Samson's disobedience for His glory.***

Եղ. 30:14 - 14 Ամեն հաշուի տակ անցնող քսան տարեկանը եւ էլ աւելին տա Եհովայի **ընծան:**

Թվ. 1:3 - 3 Իսրայէլի մէջ բոլոր **պատերազմի գնացողները՝** *քսան տարեկանից վեր համարեցէք նորանց իրանց գունդերի համեմատ դու եւ Ահարոնը:*

Թվ. 14:29-31 - ***29 ...քսան տարեկանից վեր եղողները՝*** *որ դուք ինձ դէմ տրտնջեցիք, 30 Բնաւ պիտի չմտնէք այն երկիրը...*

Չափահաս որդիներն ու դուստրերը պետք է գան քեզ մոտ խորհրդի համար, սակայն բոլոր որոշումների համար իրենք պետք է աղոթեն և որոշեն: Որոշ չափահաս երեխաներ կարիք ունեն աճելու և մտնելու չափահասության մեջ, այնպես որ ծնողներն իրենց զավակների կյանքի հետ կապված կարիք ունեն ավելի շատ վստահելու Աստծուն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աստված ուզում է օրհնել ընտանիքներն ու տեսնել, որ նրանք քայլում են ազատության և առողջ փոխհարաբերությունների մեջ՝ Իր հովանու ներքո: